

ՀԱՅՈՎ ՑԵՎ ՀԱՅՈՎ ՊԵԶՄ-ԾՎԻՑՔԻՄ ՀՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱԶԸ-ԱՎԻԱՔԻՄ ԽՍԴՄ-Ի ԽԱՂԱՆ ԱՇԽԱ-  
ՏԱՆՔԻ ՑԵՎ ՊԱՀՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆ Ե

Միջազգային Մ. Մ. Վ. Կ. Ր. Ա. Ն.

№ 25

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՄԱՏՈՒՆԵՐԻ  
ԴԵՄ ԳՈՐԾԱՑՎՈՂ ԳԼԻԱՎՈՐ  
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

«ՊԱԶԸ-ԱՎԻԱՔԻՄ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե Ե Ր Ե Վ Ո Ւ

1930

# ՀԱԽՑ ՊԱԶԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎԵԱԼ ԳՐՔԵՐԸ

ԿԱՊ.

1. Ա. Բաղդասարյան.—«Սովորիք ուազմական գործը» . . . . .	25
2. Ա. Բաղդասարյան.—«Հայկական զիվիզիայի անցյալից» . . . . .	20
3. Լիտոլիցիլ.—«Ճեխսիկան պատերազմում» . . . . .	13
4. ՊԱԶԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ՔՃիջներին կից ողաբարիական պաշտպանության խմբակներ (ծրագրեր և կազմակերպչական մեթոդական խնդիրներ) . . . . .	10
5. Բահամձեւը ՀՍԽՀ ՊԱԶԸ-ԱՎԻԱԲԻՄԻ Հայաստանյան 2-րդ համապումբրի . . . . .	5
6. Ռոզանիոլ.—«Ի՞նչ և ինչպես ողեաք և անել մողելիսաների խմբակներում» . . . . .	10
7. Վ. Յեյտլին.—«Ալզավնիները ուազմական ծառայության մեջ» . . . . .	10
8. Ա. Բելով.—«Ինչպես սովորել հրացանով ճիշտ կրակել» . . . . .	10
9. Վ. Յազիկով.—«Շունը ուազմական ծառայության մեջ» . . . . .	15
10. Քիմիայի գոկասր Յա. Ֆիշման.—«Քիմիան ժողովրդական տնտեսության և ողաշտագանության մեջ» . . . . .	15
11. Մրազիք Հետեակի և աստիճանի սովորեկան զիտելիքների խմբակների . . . . .	10
12. Հրահանդ ՊԱԶԸ-ԱՎԻԱԲԻՄԻ 4-րդ վիճակախաղն անցկացնելու համար . . . . .	—
13. Վ. Լենտիկ.—«Հրաձգային խմբակը և նրա կառուցվածքը» . . . . .	12
14. Լ. Բեկինիկսիյան.—«Կարագրինայի թրթուռը և պայքարը նրա դեմ» . . . . .	10
15. Ռ. Խոյրյան.—«Հրպեհաչէջ դործի Համառոտ ձեռնարկ ողաբիմիական պաշտպանության հրահանդիչների Համար» . . . . .	8
16. Ի. Կուպրեյենի.—«Փսստային ողավնապահության Համար» . . . . .	15
17. Ց. Մովսիսյան.—«Քիմիան զյուզատնեսության մեջ» . . . . .	15

ԱՌՋԱԿ ԱՆԳ ՀԵԽ ՊԵՏՐՈՎԻՉ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԵՏՐՈՎԻՉ ԽՈՎՄԻ ԽՈՎՄԻ ԽՈՎՄԻ  
ԽՈՎՄԻ ԽՈՎՄԻ ԽՈՎՄԻ ԽՈՎՄԻ

Միջազգային Մ. Մ. Ա. Ա. Ա. Ա.


632.95

№ 25

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵԱՍԱՏՈՒԵԹԻ  
ԴԵՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ  
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

A 4361

X



«ՊԵՏՐՈՎԻՉ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ

1930

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՎԵՐ 2212  
ԳՐԱՑՈՒՑՆԵՐ 5077 (բ.)  
ՏԵՐԱԳ 2000

**ԱՅՉԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԱՏՅԻՆԵՐԻ ԴԵՄ  
ԳՅՐՆԱՄԴՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԵՆ  
ՆՅԱԼԻՑԵՐԸ**

Անաստառու միջատների ղեմ քիմիական նյութերով  
տարվող պայքարը ներկայումս զործնականում շատ լայն  
ծավալ և սուանում : Գոյություն ունեն շատ քիմիա-  
կան թունավոր նյութեր՝ իրենց զործածության զանա-  
գան լիզանակներով, բայց մենք կանդ կառնենք միայն  
ամենատարածված և ամենազործածական տևակների  
վրա :

Հնասատուների ղեմ զործադրվող թունավոր քի-  
միական նյութերը բաժանվում են 2 խմբի .

1. Նյութեր, վորոնք խրանեցնում են միջատներին  
(որին՝ չորերի ցեց և այլն) իրենց հոսում .

2. Նյութեր, վորոնք մեռցնում են միջատներին :

Խրանեցնող նյութեր (նաֆտալին, կամֆարա, կրեո-  
զուս և այլն) միայն արդեք են հաճշիսանում միջատի  
ներս մանելուն, բայց չեն մեռցնում նրան . բաց տա-  
րածությունների վրա— որդում, վաշտում, բանջա-  
րանցում այդ քիմիական նյութերը վնասատուների  
վրա վույ մի ազդեցություն չեն անում :

Միջատների մեռցնող քիմիական նյութերը կոչ-  
վում են ինսեկտիսիգներ : <sup>2)</sup> Բայց իրենց ազդեցության,  
նրանք բաժանվում են ներքին ազդեցության կամ աղի-  
քային ինսեկտիսիգների և արտաքին ազդեցության  
կամ կիստական ինսեկտիսիգների :

<sup>2)</sup> Ինսեկտիսիգն լատիներին բռու ե, վոր կազմված ինսեկ-  
տում (միջատ) և սիզո (մածանալ) բառերից և վորը նշանակում  
է միջատապահ :

Ներքին ազգեցության ինսեկտիսէղները մնագի հետ  
մտնելով միջառի մարտզության գրծարանները թու-  
նավորամ և սպանում են նրան։ Արտաքին ազգեցու-  
թյան խմբին միջառներին սպանում են ազ-  
գելով նրանց շնչառության գրծարանների կամ մն-  
միջականորեն մաշկի վրա, իսկ որու միջոցով նաև մի-  
ջառի մյուս գրծարանների վրա։ Այսուղից պարզ է,  
վար ներքին ազգեցության ֆիմիական նյութերը պետ-  
քանի են միայն այն միջառների դեմ կավելու համար,  
վարնեք ունեն կրծող բերանի մասեր։ Կրծելով թույնով  
ծածկված տերեմները, ցողունը, պառազները և այլն,  
թրթուսը կամ հասուն միջառը մնագի հետ կույ և տո-  
լիս նուև թույնի կառներ և թունավորում են։ Ինքնրա-  
տինքյան հասկանարի յե, վոր ներքին ազգեցության  
թույներն անպեսք են միջառների ձվերին ու հարսնյակ-  
ներին սպանելու համար, վորովհետեւ սրանք մնունց  
չեն ստանում։ Այդ թույներն անողետք են նուև թրթու-  
սի մաշկափոխության ժամանակ, յերբ թրթուսները  
չեն մնում։ Նրանք անողետք են և այն միջառների վեմ։  
Վարնեք ծծում են և վոչ թե կրծում։ Այս վերջնները  
(մլուկները, բիբճները, վահանավոր բիբճները և այլն)  
իրենց կնճիթը խրում են տերեկ, ցողունի կամ պառազ-  
ների հյուսվածքի մեջ և ծծում են նրանց հյութը, ծա-  
կելով միայն բույսի մաշկը։ Այս գեղեցում բույսի վը-  
նուսված մտոք, ծծող միջառների մարտզության գրո-  
շարանները չեն ընկնում և նրանց չեն մնան։ Այդ  
պատճառով պետք է ընդհանուր կանոն ընդունել, վոր  
ծակող և ծծող միջառների դեմ ներքին ազգեցության  
թույներով (որին՝ պարիզյան կանոչով) կունենալ չեն կա-  
րելի, զրանց դեմ պետք է կավել արտաքին ազգեցու-  
թյան թույներով, վորնեք ինչպես առաջինք, ազդում

Են չնշառության գործարանների վրա և այբում են ժաշկը, այդ պատճառով նրանք կարող են գործածվել քայլը միջանների դեմ, սակայն, գործնականում նրանց դորձ են ածում այն գեղքերում, յերբ կովում են խօսքերով կամ գաղութներով առզրող ծծող միջառների դեմ (որինակ՝ բիբներ), կամ յերբ կովում ենք պահառների վնասառատունների դեմ:

Ինչպիսի թույն ել մինք գործադրենք՝ ներքին թե արտաքին, մենք պետք են իմանանք նրա ուժը։ Վորպեսպի պայտը հաջող վերջանա, անհրաժեշտ են, վորթույնն ազգի արագ և վճռականորեն, բայց այնքան ուժեղ չլինի, վոր վնասի բույսերին։ Դրա համար, յեթե ուզում ենք խմանալ՝ պետքակա՞ն ե արդյոք վորեն ինսեկտիսիդ, տվյալ բույսի վրա տվյալ տեսակի միջառի դեմ կովերու համար պետք ե փորձ կատարենք, սկզբում վորոշենք ամենաքիչ գոզան( թույնի քանակը), վորն սպանում ե վնասառու միջառներին, առա ամենաշատ դոզան, վորը կարող է տանել բույսն առանց վնասինը։ Յեթե պարզվեց, վոր ամենաբարձր դոզան, վորին գիտանում ե բույսը պակաս ե այն ամենասպաքը գոզացից, վորն անհրաժեշտ է վնասառատոն սպաներու համար, նշանակում է տվյալ ինսեկտիսիդը տրվյալ պայմաններում չի կարելի գործադրել։ Փոքր տարածության վրա կատարված փորձը կազմատի սպելորդ ծախսերից և անսպասելի վոչ դուրեկան հետեանքներից, վորովհետեւ միենույն ինսեկտիսիդի ազդեցությունը նույնիսկ միենույն տեսակի միջառով վրա վոփոխվամ է համաձայն ողերեվութարանական պայմանների, միջարի հասակի և այլն։ Այնպես վոր մի գեղքում հիմնալի ազգուղ գոզան, մի ուրիշ դեպքում կարող է շատ թույլ աղղել։ Որինակ՝ խոնավ յեղանակին ինոհեկութ-

սիսներն ամելի պակաս թունավոր են, ջահել թրթուռ-  
ները պակաս դիմացկուն են և այլն: Միաժամանակ  
թույնի միւնույն վողան տարբեր աղղեցություն և ա-  
նում վոչ միայն տարբեր տեսակի բույսերի, այլ և  
նույն տեսակի վրա, նայած փոփոխակին, հասակին,  
տնման տեղի աշխարհագրական լայնությունը և այլն:  
Այսպես, վորքան լույսը մատղաւ և, վոր-  
քան մատաղ են նրա տերեզվները, այնքան  
թույնի զողան պետք ե քիչ լինի: Բացի այդ, հենց բն-  
սեկախսիդները կարող են համասար աղղեցություն  
չունենալ, կամ պարզապես կեղծված լինել: Այս բոլորն  
ունի խոչոր վործնական նշանակություն:

### ՆԵՐՔԻՆ ՍԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԻՆՍԵԿՏԻՎԻԴՆԵՐ

Այդու վնասատուների գեմ զործադրովող ներքին աղ-  
ղեցության ինսեկտիսիդներից ամենաշատ տարածված-  
ներն են պարիզյան կոմ շվեյնֆուրտի կանաչը, աղուր-  
դինը, ջիւղսինը և քլորական բարիումը: Արանք զործ են  
աճվում խնձորենու ցեցի, կարաղրինայի, մորիխների  
և այլնի գեմ:

Պարիզյան կանաչը զմբուխտի զույնի բյուրեղային  
փոշի յե, ջրի մեջ չի լուծվում և նրանից ծանր և, այդ-  
պատճառով շատ արագ նստում ե ջրի տակ: Պարիզյան  
կանաչի բաղադրության մեջ կա մկնդեղ և պղինձ: Այստեղ նյութը հանդիսանում է մկնդեղը: Բացի զրա-  
նից, պարիզյան կանաչի մեջ կա աղատ մկնդեղային  
թթու, վորը լուծվում է ջրի մեջ և սրսկելիս կարող է  
տերեներն այրել: այդ պատճառով պարիզյան կանա-  
չին ավելացնում են նոր հանդցրած կիր մկնդեղային  
թթուն շեղոքացնելու կամ անվնաս զարծնելու համար:  
Վորպեսզի լուծույթը լավ կպչի բույսերին, նրան տ-

վելտցնում են 200 դրամ գոշար կամ ալյուրի կրեյստեր (սոսինձ)։

Պարիղյան կանաչից ինսեկտիսիդ պատրաստում են հետեւյալ ձևելով։ Վերցնում են միջին հաշվով 15-20 դրամ պարիղյան կանաչ կամ ապակյա (բայց վոչ յերեւք յերկաթյա) ամանի մեջ, վրան ավելացնում են մի քիչ ջուր և խառնում են խառնիչով (ծողիկով), վորուսուցի ստացվի կանաչ խմոր, ապա ավելացնում են ելի ջուր մինչև վոր ստացվի սերի թանձրության խառնուրդ։ Խառնուրդի մեջ պատահող գնդիկները խնամքով արորում-մանբացնում են։ Ենու, խառնուրդին ավելացնում են ջուր, մողի միջով անց են կացնում վայրու տակառի մեջ, վորտեղ լցնում են մինչև 12 լիոր ջուր։ Միաժամանակ պատրաստում են կիրը։ Կիրը վերցնում են պարիղյան կանաչից յերկու անգամ շատ և հանդցնում են վորեւ ամանի մեջ, ստափանաբար վրան ջուր ավելացնելով։ յերը վոր կիրը կհանդչի և կիոշիան, վրան ավելացնում են ջուր և ստացված կրտջուրը մողի միջով լցնում են նույն տակառի մեջ, վորտեղ լցված եր պարիղյան կանաչը։ Եիրը պետք է լինի լավորակ, հակառակ գեղքում, կեկեղտոտի որսկիչի ծայրի անցքը։ Այս գեղը դործագրվում է կրծող միջաների գեմ կովելու համար։

Ազուրգին։ Ինչպես հայրնի յե, պարիղյան կանաչի պակասությունը նրա ծանր լինելի է, վորի շնորհիվ նուշատ արագ նատում և ջրի տակ։ Դրա համար խորհուրդ են տալիս պարիղյան կանաչը նախագես լուծել նաշտաբրի սպիրտի մեջ, վորից անհրաժեշտ է վերցնել 1 ½ չլչ՝ 400 դրամ պարիղյան կանաչի համար։ Այս յեղանակով պարիղյան կանաչից պատրաստված դեղի թունիքը հատկաթյունները յերկու անգամ ուժեղ են

սովորական պարփակյան կանուշից : Այս ձեմով պատրաստված պարփակյան կանուշը կոչվում է ազուլզին :

Վորողեազի պարփակյան կանուշի մասնիկները կոչվեն բույսին, պետք և ավելացնել կես բաժակ պաշտը (պատոկա) մի գույլ ստացված բուծութին, կամ ալյուրի կլեյտեր, վորը պատրաստվում է 100 դրամ ալյուրը մեկ գույլ ջրի մեջ բաց անելով, պետք և խմանալ, վոր պատրպինն անի այն պակասությունը, վոր այրում և նուռը ծառերի (որին, գեղձի, մորենու և այլն) անբեները, այնողիս վոր դա գործադրելիս պետք և դրայց լինել :

Զիպսին . Զիպսինը մկնդեզաթթվացին արձան և սպիտակ գույնի ազ և, վոր բոլորովին չի բուծվամ ջրի մեջ, բայց և կոչում տերեւներին և բոլորովին չի վնասաւմ նրանց : Այսպիսով, Զիպսինը գործադրելիս, կորիք չկա ավելացնել կիր, վորն անհրաժեշտ է գործածել պարփակյան կանուշի դեսպանմ : Զիպսինը չի պարունակում թթուներ, վարոնց անհրաժեշտ լինելը չեղոքացնել բույսերի վրա վաստակեցություն չի ունիլու համար : Կարիք չի լինում գործադրել կիր և որից նյութեր, ուրագեազի թույնը կոչչի բույսի որակիում մակերեվութին, վարովհեան Զիպսինը հենց մեծակ մաքուր դրաթյամբ լավ ու յերկար ժամանակ (յերեսն մի քանի շաբաթ) մնաւմ և բույսերի տերեւների վրա և ովանում և իր թունավոր աղղեցությունը : Զիպսինի սպիտակ կույնից կարելի յե տարրերել որակիում բույսերը շարուկածներից :

Զիպսինը ծախսում է պատրաստի գրաթյամբ, բայց կարող ենք պատրաստել և ինքներ :

4—5 կիլո Զիպսին պատրաստելու համար, վերցնում

Են Ա Եկեղեց հայութեան մասիր ջարդուծ քացախաթթվալային  
որձիք (որձատցին շաքար) և 2 կիլո մէկնզեզաթթվալային  
նուռիում : Այդ նյութերից յարաքանչյուրը տեղափա-  
րում էն տառենքին անտիմներում, վորոնց մեջ լցնում են  
4-ական դույլ (50 լիտր) տաք ջուր և խառնում են 15-20  
րոպէ մինչև լրիվ բաւծվելը : Յերբ տղերը լուծվել են,  
այն ժամանակ ստացված բաւծույթներն իրար հետ լց-  
նում են մի յերրարգ ամանի մեջ, վորի հետեւանքով  
ստացված և ջիպսին, վորը գանդաղորեն նստում և ա-  
մանի հասակին վարովես սպիտակ վոշի : Յերբ ամրացվ  
ջիպսինը նստում է, նրա վերելի մասում գտնվող հե-  
ղուկը թափում են, նստված ըր լավ լիանում են ջրով և  
այսպիսով ստացվուծ ջիպսին ողտողործվում և բա-  
կարիքի :

Ստացվուծ վիշտը ինսեկտիսիդ պատրաստելու հա-  
մար վերցնում են կեսից մինչև մեկ կիլո՝ 40 դույլ  
ջրին, վնասատուն ավելի արտկ և հաջող վաշնչացնելու  
համար, կարելի յն ավելի շատ ջիպսին վերցնել, վո-  
րովհետեւ նա բայցը համար բարերարեն անվնաս և ինչ-  
ովհան զազարով ել վոր գործադրիքի :

Ջիպսինը գործադրվում է կրծող միջատների զեմ :

Քրաքական բարիում (կամ բորիում քլորիդ)՝ սպի-  
տակ դույնի բյուրեղային նյութ և, վորը հետ լուծ-  
վում և ջրի մեջ և ուղի պատճառով հեշտությամբ լիաց-  
վում և ակրելի վրայից անձրե ժամանակ . ուղի պատ-  
ճառով անձրեից հետ կարիք և լինում յերկրորդ ան-  
ուժ որսիկ : Վարակեալի բարիումն ավելի լավ կաշի, ու-  
ժիւացնում են զոշար (պատոկա) 2-4 կիլո, կամ կո-  
նիֆուլ 400-600 գր. 12 լիտր ջրի մեջ : Բարիումն աղջում  
և միջատների վրա վորագես լուծողական և փախեցնող :  
Չոր և չոր յեղանակին ավելի յն աղջում, խոնավ և  
ցուրտ յեղանակին՝ թույլ : Այդ պատճառով, խոնավ յե-

զանակին, յերբ մէջտաները բույսերի վրա իրմից հա-  
մար խոնավություն են զանում, բարիում քլորիդը  
թույլ և ազգում, ուստի նրա գործածությունը կտրելի  
յի խորհուրդ տալ միայն շոր և չող յեղանակին։ Բա-  
րիում քլորիդը ուրծաղրվում և վորովես ներքին և վոր-  
ովես արտաքին խոնեկտիսիդ, այսինքն՝ թե՛ կրծող և թե՛  
ձեռող միջատների դեմ։

### ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԵՑՅՈՒԹՅԱՆ ԽՆՍԵԿՑԻՍԻԴՆԵՐ.

Բուզմաթիվ հեղուկ կոնտակտ ինսեկտիսիդներից  
կծանոթանանք միայն ամենակարեվորներին, վորոնք  
դյուզատնության մեջ ավելի զործածական են՝ ինտ  
յերկար և արջապ, կանաչ և սովորական լվացքի ռնառ  
(ռնարն), նայիթ և նրա եմուլսիոները, ծիաբառի  
եքստրակտ, կվասսիա և կալիֆորնյան հեղուկ։ Մրանք  
զործ են ածվում լիիճների դեմ, վորոնք վնասում են  
պաղատռ ծառերին։

Յերկար արջապ դործաղրվում և պաղատռ ծա-  
ռերը սրակելու համար, դարնանը բողբոջների ուռչե-  
լուց առաջ, կամ աշնանը տերեւկաթափից հետո, վահա-  
նագուր լիիճներին և լիիճների ձվերն ու քաները վոշին-  
չացնելու համար։ Լուծույթը պատրաստում են այս-  
պես։ ¾ կելո յերկաթի արջապը լուծում են 12 լիոր  
(1 դույլ) ջրի մեջ։

Կանաչ և սովորական լվացքի ռնառ։ Կանաչ ոճառը  
պետք է բաց անել մի քիչ տաք ջրի մեջ և հետո լուծել  
ջրի մեջ։ Հասարակ ոճառն անհրաժեշտ և մանր կոտո-  
րել և լուծել տաք ջրի մեջ, խառնելով հեղուկն այնքան  
ժամանակ, մինչեւ վար ոճառի կտորները կբացվին ջրի  
մեջ։ 12 լիոր ջրին վերցնում են 200–400 գր. ոճառ։

Նավթը մաքուր գրաւթյամբ այրում և բույսերին  
կանաչ մտաները, գրա համար այն գործածում են միայն

սբոկելով կամ զրձինով քսելով լճերի կոմ հառ ։ Ճյուղերի վրա դանվող ձվերը կամ միջատները վոչչացնելու համար : Ամենից հաճախ նավթը գործադրում են ուրիշ նյութերի հետ խառնած՝ եմուլսիայի ձևով :

Նավթակրային եմուլսիան պատրաստում են հետևյալ ձևով . 200 զրամ չհանգած կիրը հանցնում են սալարտին ծեվով և ապա լուծում մի զույլ ջրի մեջ՝ սաւացված կրակաթի մեջ լցնում են 600 զր . նավթ և խառնուրդն ուժեղ կերպով հարում են ճիղուափ խրցով այնքան ժամանակ , մինչև վոր սաւացվի բարձրութիւն միտուրը պղտոր-սպիտակ հեղուկ-եմուլսիա :

Նավթա-սնառային եմուլսիան պատրաստում են այսօքես . — 400 զրամ սովորական սալարտի լուծում են կեռ զույլ տաք փափուկ (վոչ ջրհորի) ջրի մեջ և լցնում են արգանդ 2 և ½ կիլո նավթ : Խառնուրդը հարում են ճիղուափի խրցով , մինչև վոր սաւացվի սերի խառնության միտուրը սպիտակավուն եմուլսիա , վորը սրսկելու ժամանակ նոսրացնում են 4 զույլ ջրով :

Եմուլսիաներն անհրաժեշտ են ոգտագործել պատրաստելոց անմիջապես հետո , հակառակ զեղքում , նավթը կրկին գուրս գալ խառնուրդի միջից և կայրի բաւականիք : Չի կարելի սրսկել շոգ յեղանակին , վորով-հետեւ այդ զեղքում եմուլսիան մասնակիորեն այրում և բույսերը :

Միախոտի եքստրակտը լույ կանուակա ինսեկտիսիդ . պատրաստվում է այսպես . — 400 զրամ ծխախոտ (կամ ծխախոտի վոշի , մախորկա) , մի որ սուսջ թրթում են մեկ զույլ ջրի մեջ . իսկ հետեվյալ որը յեփում են 3-4 ժամ , վորից հետո քամում են և նոսրացնաւմ 2 զույլ ջրով , սպիտակավուն 50-100 զրամ ոճառ , վորպեսզի ավելի լույ պատի միջուափ մարմինը , վորն ա-

առանց ոճատի հաջող չի լինում։ Միաւիսափ եքառակե-  
տը գործածելիս, պետք է նկատի ունենալ, վոր նա շուտ  
է սկսում խմորվել, ուստի անհրաժեշտ է այն շուտ  
գործածել։

Կվասսիա— արուպիկական ծառ կվասսիա ուժա-  
րայի թեփի և։ Կվասսիայից ինսեկտիսիդ պատրաստում  
են հետեւյալ ձեզով։ 1 հ 1/4 կիլո թեփ լցնում են պղնձե-  
անոթի մեջ, ավելացնում են ջուր և յեփում յերկու-  
ժամ, ապա յեփուածքը քամում են մազով և վրան ամե-  
լացնում 3/4 կիլո ոճատի լուծույթ։ Այս հիմնարկան խառ-  
նուրդը բաց են թողնում 8 գույլ ջրի մեջ և գործադրութ-  
յիասատուների դեմ։ Կվասսիան կարելի յե գործադրել  
ցանկացած ուժեղությունը առանց վնասելու բռնի-  
րին։

Կալիֆորնիան խառնուրդ կամ հեղուկ։ Կալիֆոր-  
նյան խառնուրդը պատրաստում են հետեյալ կերպ։—  
Կամք, ապակյա կամ փայտե ամանում քիչ տաք ջրի  
մեջ պետք է հանգցնել 1, 2 կիլոդրամ կիր։ Հենց վոր  
կիրը կտիսի յեռալ և քայլքարին, նրա մեջ քիշ-քիչ խիտ  
մազի միջով լցնում են 2 և կես կիլո ծծումք միաժա-  
մանակ խառնելով փայտե խառնիչով և քիշ-քիչ տաք  
ջուր լցնելով։ Այդ արխում և ամենից առաջ նրա հո-  
գար, վորպեսզի բույսերի տերեխների վրա այրումներ  
չտուշանան։ Իսկ յերկրորդ՝ վորպեսզի ավելացրած  
կիրը ծծմքի հետ հավասարաշատի խառնիք։ Յերր ամ-  
րագ ծծումքը կլցվի և կրի հանգչելու գործողությունը  
կիմերանա, կստացմի բաց գեղին սերտնման մասսա, վո-  
րին խառնում են այնքան ջուր, վոր առաջուց լցրած ջի հ  
հետ միասին խառնուրդի մեջ լինի 1 1/2 դույլ ջուր։  
Ապա ամրոցի խառնուրդը լցնում են չուկունե կաթոս-  
քի մեջ, վորի ներսի պատի վրա նշանակվում է հեղուկի  
քարձությունը և դնում են կրտեկի վրա։ Յեփելու ամ-

բազմ բնեթացքում հեղուկը պետք է խառնել վայրեն խաղնիչով և շթոլնել, վոր նա ուժնու յեփ գտ, վարի համար հեղուկի մեջ ժամանակ առ ժամանակ պետք է լցնել առք ջուր մինչեւ նշան արած անդր՝ կրակի վրա հեղուկն աստիճանաբար զատնում և մութ գեղին, յերբ սկսում և յիսալ, զատնում և կեղուա-կանաչագոյն, բակում և կարմրել և վերջիվերջու զատնում և մութ կարմիր կեղուա-կանաչագոյն նստվածքով։ Յերբ հեղուկը զատնում և մուգ-կարմիր, յեփելլ վերջացնում են, բայց հեղուկը եռ մի քանի ժամ թողնում են կաթուցի մեջ, վարութագի նստվածքը նստի և միայն զրոնից հետո րդպուշտի թրմքը յերեսի հեղուկը զատարկում են ապակյունութիւնից, վարուել, յեթե բերանն ամուր վակած է, նու լով և մնում և մի քանի շաբաթիներ ողոնդունում եր բուժիչ նստկությունը։

Արտղիսով սատցվուծ կալիֆուրնյան հեղուկը համարվում և նորմալ և նու պետք և ունենալ 20 տոս։ Թրմությունն Բաժեկի խառչափով (արեսմետրով)։ Հեղուկի թնդանությունն իմանալու համար պետք և հեղուկը լցնել 25-30 ամ։ բարձրությունն ունեցող ապակյունութիւնի մեջ և ընկույզել նրա մեջ արեսմետր։ Յեթե հեղուկը թունդ և լինում, կարելի յի տաք ջրով նորացնել մինչեւ նորմալ լուծույթ ստանալը, իսկ յեթե թուլ և, պետք և յիսացնել մինչեւ նորմալ կոնցենտրացիոն։

Գործնականում կալիֆուրնյան հեղուկի նորմալ թնդությունը վորոշելու համար հետ միջոց կարելի յերնդունել նրա մուգ կարմիր զույնը, զա բավականին ճիշտ նշան և նրա պիտանիությունը վորոշելու համար։

Այս ձեռք սատցված կալիֆուրնյան հեղուկը նորմացնում են 3-4 մտ ջրի մեջ և գործադրում են գարնանը (մինչեւ բարություների առջելլ) և աշնանար (աերեաթու-

պից հետո) պազատու ծառերը և թփուտները՝ սրոկելու համար սնկային հիվանդությունների սպորների դեմ։ Այդ ձեվավ գործադրված կալիֆորնյան հեղուկը միեղնուում ժամանակ ծառայում և հիանալի խսեկտիւիդ կեղեղիվ վրա ձմեռող վնասատու միջատների և նրանց ձվերի վոչնչացման համար։ Տերեով ծածկված բույսերի սրոկման համար վերացնում են մեկ մաս կալիֆորնյան հեղուկի և նոորացնում 40 մաս ջրի մեջ ( $\frac{1}{2}$  շիլ կալիֆորնյան հեղուկ մեկ դույլ ջրի մեջ), վորը և գործադրում են «չոռի», ծծող միջատների և մի քանի սնկերի դեմ։ Կալիֆորնյան հեղուկը ունի այն պակասությունը, վոր կամոց-կամաց վիճացնում և սրոկիչ մեջնան։

### ՍՐԾԿՄԱՆ ՑԵԽՆԻԿԱՆ

Սրոկվելու ժամանակ պետք է զեկավարվի հետեւյալ կանոններով։

1. Սրոկվաղ հեղուկը պետք է զուրու զա սրոկիչ մեքենայի խողավակի ծայրից մանր վոչխացած գրությունը և ծածկի բույսի տերևները հավասարապես և ամբողջովին, ինչպես ցողը։ Զալետք և այնպիս սրոկել, վոր հեղուկը կաթիչների ձեռվ տերևներից թափվի։ Հավասարաչափ սրոկման համար պետք է խողավակի ծայրը պահել բույսից 70–100 սահամետը հասավորության վրա, հոսանքը ծառի առանձին մասերի վրա յերկար չպահել, այլ խողավակի ծայրը չարժել հավասար արագությամբ, առանց վորոշ մասեր բաց թողնելու։

2. Ցերը հեղուկի մեջ կան ջրի մեջ չլուծվող նյութեր (վարիզյան կանաչ կիր և այլն) անհրաժեշտ և հետեւ, վոր այդ նյութերը սրոկվելու ժամանակ հավասարապես խառնված լինեն հեղուկի մեջ և չնատեն սրոկիչ գործիքի հատակին։ Վրա համար անհրաժեշտ և հեղուկը աշխատանքի ժամանակ թոփահարել կոմ

խորնել . Հակառակ զեպքում հեղուկը դուրս կդա զոր-  
ծիքի միջից տարրնք չափով թույնով հաղեցած , վորը  
կընկնի բույսերի վրա յերբեմն մեծ քանակությամբ և  
կայրի նրան , յերբեմն եւ քիչ քանակությամբ և չե-  
թունափորի միջաւին : Բացի զրանից , կարող և կեզա-  
կարին խաղաղակի ծայրը : Դրա համար ջրի մեջ չլուծ-  
վող նյութը (կիր , կավ և այլն) գործածելուց առաջ  
ովեաք և , վորքան հնարավոր և , մահր ջարդել և ոպա-  
տել ավագի խառնուրդից քամելով բարակ մաղի կամ  
թանգիրի միջոցով : Առանց քամելու գործիքի մեջ չե-  
կարելի լցնել նույնիսկ ջուր , վարովհետեւ նրա մեջ կա-  
րող են լինել ամազ , բույսի կտորներ և ուրիշ կեզակեր ,  
մորոնք կարող են կեզառառել խողափակի ծայրը :

3. Զի կարելի սրսկել քամու ժամանակի , վորովհետեւ  
այլ զեպքում հսունքը պետք և ուղղել միայն քամու  
ազգությամբ , վորի հետեւնքով միայն մի կողմը  
կարսկիմ : Իսկ քամուն հակառակ սրսկելիս հեղուկի  
հսունքը հետ կղատնա և կիթափովի աշխատողի վրա :

4. Շոպ , արեատ չեղանակին կարելի լի սրսկել  
միայն առավատ և լերեկոյան : Աւժեղ աշեի ժամանակ  
անհրաժեշտ և զագարեցնել աշխատանքը մանավանք  
արգիներում և բանջարանոցներում , հակառակ դիպ-  
քում սրսկումից տերեները ալլվածքներ կսատնան :

5. Զի կարելի սրսկել անձրեսից առաջ և անձրեսի  
ժամանակի , վարովհետեւ թույնը բույսի վրայից կըլաց-  
վի : անձրեսից հետո չի կարելի սրսկել մինչև այն ժա-  
մանակ , քանի դեռ բույսերը չեն ցամաքել , այլապես  
թույնը կթափի թաց բույսերի վրայից : Նույն պատ-  
ճառութ չի կարելի սրսկել շազոս բույսերին . յեթէ  
սրսկելուց հետո ուժեղ անձր / և պալիս , անհրաժեշտ և  
յերկրորդ անդամ սրսկել :

Ձի կարելի սրսկել այն ժամանակի , յերբ ողիք ներմու-

Այսուհետեւ առաջին ցածր է, այլև դիմության ցըտահամբություններից առաջ է Խոկ յեթե սրբկումն ուշացնելն անհնար է, այն ժամանակ պետք է սրբկել առավուտյան, վարպետով որվա ընթացքում բույսերը շրբանան:

7. Զի կարելի սրբկել բույսերը ծաղկելու ժամանակ, վորովհետեւ կարող են թունավորվել ծաղիկներից նեկատը հագախող մեղսուները և իշամեղուները:

8. Վհասատուների զեմ անհրաժեշտ է սրոկում կապարել հենց վոր նրանք յերեան կղան:


9. Խորհուրդ չի տրվում սրբկել բույսերը ներքին ազգեցության թույներով այն ժամանակ, յերբ վնասատու միջատները մտշկափոխվում են, վորովհետեւ այդ շրջանում նրանք չեն ուսում. Նրանք վհարկե, կոկուն ուսել յերկու-յերեք որ հետո քայլ մինչեւ այդ ժամանակ անձրեց կարող են ըլանալ թույնը: Բոլորովին անողուտ է սրոկել, յերբ միջատը հայրանյակի շրջանումն է կամ յերբ նա գտնվում է ձվի շրջանում:

10. Սրոկելու, առանձնապես մկնղեղային թույներով, անհրաժեշտ է զարգարեցնել բերքը. Հավաքելուց 2-3 շարաթ առաջ, վորովետովի բույսը ժամանակի սկզբնա մուշրվելու թույնից, այլապես այդ թույնով կարող են թունավորվել մորգիկ և կենղանիները:

11. Սրոկելիս ովետք է զգույշ լինել, վորովետով թույնը ընկնի աչքերի և քթի մեջ և ընդհանրապես լորձաթաղանթի վրա: Ազտակար և հաւուկ, ակնոցներ զնել և աշխատանքից հետո ձեռքերը ստովնով լով լինալ:

12. Սրոկելու վերջանալուց հետո անհրաժեշտ է վորձիքները մի քանի անունմ ըլանալ մաքուր թույն չորացնել և անհրաժեշտ տեղերը մեքենայի լույլ քուել:

18.	ԳՈՅՔ-ԱՎԻաքիմի որինակելի ծրագիր սպիռներների մեջ ուղմական աշխատանք կատարելու համար	15
19.	Դ. Բարայան. — Հինչ և մրիկը և ինչպես նրա զեմ կովելը	2
20.	Մ. Զայլախյան. — Փինչպես փորձեր զնել հանբային պա- րատանյութերով	25
21.	Ա. և Գ. Բարայան. — Շիտղողի վազի սիդիում հիվանդու- թյունը և նրա զեմ պայքարելու միջոցները	1
22.	Ա. և Գ. Բարայան. — Շիտղողի վազի միլդիում հիվանդու- թյունը և նրա զեմ պայքարելու միջոցները	1
23.	Ա. և Գ. Բարայան. — Շիտղողի վազի անտրակնոզ կամ շա- ծաղիկ հիվանդությունը և նրա զեմ պայքարելու մի- ջոցները	1
24.	Ա. և Գ. Բարայան. — Կարտոսֆիլի հիվանդությունը և նրա զեմ պայքարելու միջոցները	1



X



(034)

ԳՐԱՅԻ 8 ԿԼԴ.

836

A I  
4361

Энтомолог М. МАКАРЯН

Главнейшие химические составы, применяемые  
в борьбе с вредителями садоводства